

## ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ\* 

*Երևանի պետական համալսարան*

Պարբերության նախադասությունների կապակցման ուսումնասիրությունը տեքստի լեզվաբանության կարևոր խնդիրներից է: Ինչպես որ կան բառերի և բարդ նախադասությունների բաղադրիչների կապակցման միջոցներ, այնպես էլ գործում են պարբերության նախադասությունների կապակցման միջոցներ: Դրանք բավականին շատ են, սակայն ամենից էական դերը թերևս ունեն կրկնությունը և փոխարինումը: Այս միջոցներն ունեն իրենց դրսևորման ձևերը, որոնք քննված են հոդվածում: Կրկնությունը լինում է բառային և քերականական: Փոխարինումը կատարվում է դերանունով, փոխանունով, հոմանիշով, բնորոշմամբ: Այս միջոցներով պարբերության նախադասությունների միջև կապեր են ստեղծվում, որոնք որոշ դեպքերում ավելի ամուր են, որոշ դեպքերում՝ համեմատաբար թույլ: Եթե նախադասությունների միջև ներտեքստային կապեր չստեղծվեն, ապա կլինի նախադասությունների բազմություն, բայց ոչ տեքստ, թեև ամեն մի նախադասություն կարտահայտի իր իմաստը: Ներտեքստային կապակցման միջոցների ընտրության հարցում կարևոր է նաև ոճական գործոնը:

**Բանալի բառեր** – նախադասությունների կապակցություն, տեքստ, կրկնություն, փոխարինում, դերանուն, զեղչում, պարբերություն, կապակցման միջոց, հոմանիշ, բնորոշում

Շարահյուսական համակարգի ուսումնասիրությունը երկար ժամանակ ավարտվել է բարդ նախադասության քննությամբ: 20-րդ դարի կեսերից սկսում է ձևավորվել տեքստի լեզվաբանությունը: Թեև տեքստին վերաբերող լեզվաբանական տարբեր իրողություններ ուշադրության են արժանացել վաղուց, սակայն հիմնականում չեն ուսումնասիրվել տեքստի ամբողջության տեսանկյունից: Դրանք սկսեցին համակարգվել, դասակարգվել և միմյանց հետ ունեցած

\* **Արտաշես Սարգսյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

**Арташес Саркисян** – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ  
**Artashes Sarkisyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of the Armenian Language

Էլ. փոստ՝ [artashes.sargsyan@ysu.am](mailto:artashes.sargsyan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0009-0009-6165-4466>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 26.03.2024

Գրախոսվել է՝ 25.06.2024

Հաստատվել է՝ 03.07.2024

© The Author(s) 2024

փոխհարաբերությունների վերլուծմամբ ուսումնասիրվել այն ժամանակ, երբ տեքստն ընկալվեց որպես ուսումնասիրման այնպիսի առարկա, որն ունի իր ձևավորման լեզվական, իմաստային և ռճական առանձնահատկությունները: Իհարկե, դեռևս միասնական կարծիք չկա տեքստի սահմանման վերաբերյալ, բայց նրա հատկանիշներն ուսումնասիրվել և ուսումնասիրվում են տարբեր մոտեցումներով, որի շնորհիվ բացահայտվում են տեքստի կառուցվածքին բնորոշ տարբեր իրողություններ: Ինչպես գրում է Գ. Ջահուկյանը. «Նախադասությունից բարձր միավորների քննությունը հին ժամանակներից սկսած սովորաբար հատկացվել է ոչ լեզվաբանական այնպիսի գիտակարգերի, ինչպիսիք են ճարտասանությունը (հռետորիկան), և, այսպես կոչված, գրականության տեսությունը (պոետիկան), մասամբ էլ լեզվաբանական մի այնպիսի գիտակարգի, ինչպիսին է ռճաբանությունը»<sup>1</sup>:

Տարակարծություններ կան նաև տեքստի լեզվաբանության՝ որպես գիտաճյուղի տեղի մասին<sup>2</sup>: Այս ամենից էլ բխում է այն հարցը, թե արդյո՞ք տեքստ կազմող նախադասությունների կապակցությունը պետք է քննել շարահյուսության մեջ, թե՞ այն տեքստի լեզվաբանության ուսումնասիրության առարկա է: Բանն այն է, որ նախադասությունների կապակցումն ապահովող հիմնական միջոցները հանդես են գալիս նախադասության կազմում, ուստի մի կողմից դրանք նախադասության բաղադրիչ տարրեր են, բայց մյուս կողմից դրանցով ստեղծվող կապերը ներտեքստային իրողություններ են, այսինքն՝ նախադասության արտաքին կապերն ապահովող շատ միջոցներ դրսևորվում են նախադասության մեջ: Այս խնդիրն ուսումնասիրելիս Գ. Ջահուկյանը գրում է. «...նախադասությունը բացի ներքին հարաբերիչներից ունի նաև արտաքին հարաբերիչներ, որոնք մտնում են նրա հարացույցի մեջ. էթե պարզ նախադասությունը (ասույթը) բնութագրվում է հարաբերող բառերից և շաղկապներից բաղկացած հարացույցով, որ ապահովում է նրա գործածությունը բարդ նախադասության (լիասույթի) մեջ, ապա հասկանալի է, որ նախադասությունն ընդհանրապես որպես լիասույթ պետք է ունենա հարաբերիչ տարրեր (միջոցներ), որոնք պետք է ուսումնասիրվեն դրա քննության ժամանակ: Մակայն ավանդական քերականության մեջ առայժմ ոչ ոք չի զբաղվել լիասույթի հարացույցի լիավարտ ուսումնասիրությամբ: Գիտենք, որ *արդ, այսուհանդերձ, այսպիսով, այնուհետև* և այլ տիպի բառերը ստեղծում են այդպիսի կապեր (հարաբերություններ), բայց այդ կապերը համակարգային ուսումնասիրության չեն ենթարկվել: Հենքի (տեքստի) լեզվաբանության ներկայացուցիչները դրանք համարում են տեքստի շարահյուսության խնդիրը, բայց ըստ մեր դավանած համընդհանուր տեսության՝ այն բառիս բուն իմաստով նախադասության շարահյուսության խնդիր է»<sup>3</sup>: Տարբեր լեզվաբանների մոտեցումները տեսական

<sup>1</sup> Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 60:

<sup>2</sup> Տե՛ս Կ. *Филиппов*, Лингвистика текста, СПб., 2003, էջ 13-16:

<sup>3</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 64:

ինչ հիմնավորումներ էլ ունենան, մի բան պարզ է, որ տեքստի նախադասությունների միջև որոշակի միջոցներով ու եղանակներով իրականանում են կապեր, որոնց շնորհիվ էլ տարբեր նախադասությունները ներհյուսվում են մեկ ամբողջության մեջ: Եթե այդ կապերը չլինեն, ապա առկա կլինի նախադասությունների բազմություն, բայց ոչ տեքստ: Տեքստի նախադասությունների կապակցությանն անդրադառնալով՝ Ա. Արամյանը նշում է, որ տեքստը ներքին և արտաքին կապերի ամբողջություն է: Նա գրում է. «Ներքին կապերի բացահայտման ընթացքում մեզ առավել հետաքրքրում են պարբերությունների, որպես տեքստակազմիչ հիմնական օղակների՝ ա. միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունները, բ. դրանց մեջ մտնող նախադասությունների՝ որպես պարբերությունների կազմիչների, իրար նկատմամբ եղած հարաբերությունները, գ. պարբերությունների ներսում գտնվող կապակցությունների իրականացման միջոցների (կրկնություններ, բառակապակցություններ, բառեր, կապեր, շաղկապներ, խոսքային իրադրություններ, քերականական ձևեր և այլն) դրսևորման ձևերը, դ. արդեն հայտնի և նոր տրվող հաղորդման (թեմանոճա) և դրանց միջև եղած կապի դրսևորման ձևերը, է. պարբերություն կազմող նախադասությունների հաղորդակցական տիպերի միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները և տեքստի ընդհանուր հնչերանգային ուղղվածության նկատմամբ դրանց ունեցած ազդեցությունը»<sup>4</sup>:

Մի կողմ թողնելով վերը նշված խնդիրները, որոնք կարևոր դեր ունեն տեքստի ուսումնասիրման համար և առանձին քննության նյութ են, մենք այստեղ կանդրադառնանք տեքստի նախադասությունների կապերն իրականացնող միջոցներից միայն երկուսին՝ *կրկնությանը* և *փոխարինմանը*:

Հայտնի է, որ բառերը կապակցվում են տարբեր միջոցներով (բառաձևեր, կապեր ու շաղկապներ և այլն) ու եղանակներով (համաձայնություն, կառավարում և այլն): Որոշակի միջոցներով ու եղանակներով են կապակցվում նաև բարդ նախադասության բաղադրիչները (հարաբերյալ-հարաբերականի համաձայնություն, բայ-ստորոգյալների եղանակաժամանակային համաձայնեցում և այլն): Տեքստի նախադասությունները ևս կապակցվում են տարբեր միջոցներով ու եղանակներով: Շարահյուսական կապակցման միջոցները քննելիս Գ. Ջահուկյանը տարբերակում է սրանք. «...շարահյուսության քննության առարկան են շարույթը, նախադասությունը և տեքստը: Այստեղից հասկանալի է դառնում, որ շարահյուսական կապակցության միջոցները երեք կարգի են՝ ներշարույթային, ներնախադասական և ներտեքստային: Ներշարույթային միջոցները բառերի, ավելի ճիշտ բառաձևի (ներառյալ վերլուծական միջոցները)՝ շարույթի կազմում կապակցվելու միջոցներն են: Ներնախադասական միջոցները շարույթների՝ պարզ նախադասության և նախադասությունների՝ բարդ նա-

<sup>4</sup> Ա. Արամյան, Պարբերության կազմակերպման առանձնահատկությունները գիտական բանասիրական տեքստում, Լեզվի և ոճի հարցեր, հ. 11, Եր., 1988, էջ 6:

խաղաղության կազմում կապակցվելու միջոցներն են: Վերջապես ներտքստային միջոցները նախադասությունների և ավելի բարձր միավորների տեքստի կազմում կապակցվելու միջոցներն են»<sup>5</sup>: Ներտքստային կապակցման միջոցների շարքում ամենաէական դերը թերևս ունեն *կրկնությունն ու փոխարինումը*: Դրանք դրսևորվում են տարբեր ձևերով<sup>6</sup>:

*Կրկնությունը*՝ որպես տեքստային կապակցման միջոց, կարող է լինել բառային և քերականական: Առաջին դեպքում տեքստի տարբեր նախադասություններում կրկնվում է նույն բառը, իսկ երկրորդ դեպքում՝ քերականական նույն կարգը, ավելի ճիշտ՝ կրկնվում են նույն կարգով բառաձևերը:

*Փոխարինումը* կատարվում է չորս ձևով՝ դերանունով, փոխանունով, հոմանիշով, բնորոշմամբ: Անդրադառնանք այս ամենին առանձին-առանձին:

Ժամանակակից հայերենի նախադասությունների կապակցմանը բավականին հանգամանորեն անդրադարձել է Ս. Աբրահամյանը: Նախադասությունների միջև նշելով *միավորական, ներհակական, մասնավորման, ընդհանրացման, մեկնական, տրոհական, պատճառահետևանքային, գիջական, ժամանակի, տեղի* և այլ հարաբերություններ՝ Ս. Աբրահամյանն առանձնացնում է նախադասությունների կապակցման երեք միջոց՝ *բառական, քերականական, շարահյուսական-ոճական*: Բառական միջոցներ է համարում շաղկապները, դերանունները, այն գոյականները, ածականները և այլ խոսքի մասեր, որոնք որոշակի հարաբերության մեջ են մտնում նախորդ կամ հաջորդ նախադասության հետ և դրանով էլ կատարում կապակցական գործառույթ: Առանձնացվում է չորս խումբ՝ *քերականական հարաբերություն արտահայտող բառեր, իրադրական հարաբերություն արտահայտող բառեր, անվանում արտահայտող բառեր, վերաբերումը արտահայտող բառեր*: Կապակցման քերականական միջոցներ Ս. Աբրահամյանը համարում է շարահարությունը և շարահարությունը, իսկ շարահյուսական-ոճական միջոց՝ զեղչումը կամ ընդհանուր անդամը<sup>7</sup>:

Այս դասակարգմամբ կրկնությունն ու փոխարինումը ընդհանրական մոտեցմամբ ներկայացվում են ըստ բառական միջոցների, այսինքն՝ կապակցության այդ միջոցները քննվում են արտահայտության ձևի տեսանկյունից: Մենք հարցը քննում ենք ըստ կապակցման միջոցի՝ դրա մեջ միավորելով արտահայտության տարբեր ձևերը: Նախ առանձնացնում ենք փոխարինումն ու կրկնությունը՝ որպես նախադասությունների կապակցման միջոցներ, ապա քննում դրանց իրականացման ձևերը:

<sup>5</sup> Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 86:

<sup>6</sup> Լեզվական տարբեր մակարդակներում կրկնության տարբեր գործառույթների մասին հանգամանալից տե՛ս Ա. Կարապետյան, Կրկնությունը և զեղչումը ժամանակակից հայերենում, Գիրք Ա, Եր., 2016:

<sup>7</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 826-849:

Արդեն ասվեց, որ կրկնությունը լինում է *բառային* և *քերականական*: Բառային կրկնության դեպքում միննույն բառը, թեկուզ քերականական տարբեր ձևերով (բառաձևերով), կրկնվում է տարբեր նախադասություններում, որի միջոցով էլ կապ է ստեղծվում այդ նախադասությունների միջև: Օրինակ՝ «*Մենք նրան սիրում էինք հեռվից, վարից վեր, քաշվելով ու անհամարձակ, անհույս, առանց ակնկալության, հետևապես և առանց մրցության ու ինտրիզների: Բայց սիրում էինք լեռների պատանու անարատ սիրով: Մենք արտաքուստ կոշտ-կոպիտ էինք, բրդյա հագուստով, մազոտ տրեխներով, մոթալ փափախով, արևավառ դեմքերով ու ճաքճքված ձեռներով: Բայց մեր լեռնային սքանչելի բնությունն այնքան և գեղեցկություններ էր ամբարել մեր ներսում... Ինձ թվում է, թե այն ժամանակ մեր սարահարթերում ինչքան ծաղիկներ կային, բոլորից էլ բացվել էին իմ հոգում*»<sup>8</sup>: Վ. Անանյանի պատմվածքից բերված այս հատվածի տարբեր նախադասություններում հոգնակի թվով կրկնվում է *ես* անձնական դերանունը: Առաջին և երրորդ նախադասություններում այն գործածված է ուղղական հոլովով (մենք), չորրորդ և հինգերորդ նախադասություններում՝ սեռական հոլովով (մեր): Առաջին և երկրորդ նախադասություններում կրկնվում է նաև *սիրում էինք* բառաձևը: Այս բառակրկնությունը կապ է ստեղծում պարբերության նախադասությունների միջև, թեև կապ ստեղծող միակ միջոցը չէ (մեր նյութին առնչվող մյուս միջոցներին կանդրադառնանք ստորև): Ինչպես տեսնում ենք, կրկնվել են տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր՝ դերանուն և բայ: Ցանկացած խոսքի մասի պատկանող բառի կրկնության միջոցով հնարավոր է կապ ստեղծել տեքստի նախադասությունների միջև, ուստի որպես ներտեքստային կապակցման միջոց էականը կրկնության առկայությունն է, այլ ոչ թե կրկնվող բառի խոսքիմասային պատկանելությունը: Հիշենք, օրինակ, Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմից մի հատված, որում կրկնվում են ձայնարկություններ (նաև գոյականներ, դերանուններ).

-Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛ կ,  
 Վո՛ւշ քու սերին, քու յարին...  
 Վուշ-վո՛ւշ, Սարո՛ , վուշ-վո՛ւշ, իգի՛ թ,  
 Վո՛ւշ քու սիրած սարերին...<sup>9</sup>

Մենք դիտավորյալ այնպիսի օրինակ բերեցինք, որում հիմնականում կրկնված են ոչ նյութական խոսքի մասի պատկանող բառեր, որպեսզի ցույց տանք, որ կապակցական դեր կատարելու համար առաջին հերթին կարևորվում է կրկնությունը, այլ ոչ թե խոսքիմասային պատկանելությունը: Այդ պատճառով ենք հարցը քննում այս տեսանկյունից՝ առանձին-առանձին չանդրադառնալով գոյականի, ածականի, թվականի և մյուս խոսքի մասերին պատկանող բառերի կրկնությանը:

<sup>8</sup> Վ. Անանյան, Ուշացած խոստովանություն., Երկեր, հ. 1, Եր., 1984, էջ 350:

<sup>9</sup> Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1968, էջ 74:

Ինչպես նշվեց, կրկնությունը, բառայինից բացի, լինում է նաև *քերականական*: Այս դեպքում կրկնվում են քերականական նույն կարգն ունեցող բառեր, սակայն ոչ բոլոր դեպքերում են դրանք ներտեքստային կապի ստեղծման միջոց դառնում: Օրինակ՝ Վ. Անանյանի պատմվածքից վերը բերված հատվածի տարբեր նախադասություններում կան ներգոյական հոլովով (նաև այլ հոլովներով) դրված բառեր՝ *ներսում, սարահարթերում, հոգում*, սակայն դրանց միջոցով ներտեքստային կապեր չեն ստեղծվում: Բառաձևերի կրկնության միջոցով կապ արտահայտվում է այն դեպքում, երբ դրանց միջև իմաստային կապ կա: Դա սովորաբար լինում է այն դեպքում, երբ տարբեր նախադասություններում թվարկվում, համադրվում, հակադրվում են այդ բառաձևերը, խոսվում է հենց դրանց մասին, օրինակ՝ «*Ես հոգուս խորքում ձևեռանոց էի տարել ուսման կարոտը և այն աղջկա կարոտը: Այդ կարոտները ուռճանում, կլանում էին ողջ էությունս*»<sup>10</sup>: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջին հերթին էական դեր խաղում է միևնույն ժամանակաձևով բայերի կրկնությունը: Վ. Անանյանի պատմվածքից մեջբերված նախորդ հատվածում կրկնվում են անկատար անցյալով բայաձևերը (*սիրում էինք, սիրում էինք, կային, իջնում էր*), որը ևս կապ է ստեղծում նախադասությունների միջև: Ս. Աբրահամյանը նախադասությունների հարաբերությունները քննելիս անդրադառնում է միավորական հարաբերությամբ կապակցվող նախադասություններին, նշում, որ միավորական հարաբերությունը լինում է երկու տեսակի՝ համաժամանակային, տարաժամանակային, և հավելում. «*Համաժամանակության հարաբերությամբ միավորված նախադասությունների արտահայտած երեվույթները, դեպքերը տեղի են ունենում, նկարագրված առարկաները ներկայացվում են միևնույն ժամանակում: Այս հարաբերության արտահայտման գործում կարևոր դեր է կատարում ստորոգյալները միևնույն ժամանակով դրվելը, պայմանով, որ տարբեր նախադասություններում չլինեն տարբեր ժամանակներ ցույց տվող բառեր*»<sup>11</sup>: Խոսքը վերաբերում է թե՛ պարզ ստորոգյալներին, թե՛ բաղադրյալ ստորոգյալների հանգույցներին: Գ. Ջահուկյանը ևս քերականական կրկնությունն ուսումնասիրելիս կարևորում է բայի ժամանակաձևերի կրկնությունը՝ նշելով, որ տարբեր իրադրություններում և գործառական տարբեր ռճերի պատկանող տեքստերում կապեր են ստեղծվում որոշակի ժամանակաձևերի կրկնությամբ. «*Կրկնության լայն ըմբռնումը մեկնաբանելու նպատակով խոսենք, օրինակ, քերականական ժամանակաձևերի գործածության մասին: Հայտնի է, որ հեղինակը որոշակի ընդհանուր ֆոն է ստեղծում ժամանակաձևերի հատուկ գործածությամբ. կենսագրության մեջ, օրինակ, գերակշռում է վաղակատարը («ծնվել եմ... ավարտել եմ... ամուսնացել եմ...»), վեպերի և պատմվածքների մեջ՝ անցյալի որևէ կոնկրետ ժամանակակետի հետ հարաբերվող անցյալ կատարյալը և անցյալ վաղակատարը, գիտական աշխատանքներում՝ ներկան և*

<sup>10</sup> Վ. Անանյան, նշվ. աշխ., էջ 351:

<sup>11</sup> Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 808-809:

այլն»<sup>12</sup>: Ժամանակաձևերի կրկնության կապակցական դերը քերականական այլ ձևերի կրկնության շարքում կարևորվում է բայի առանձնահատկության հետևանքով: Քանի որ դիմավոր բայը հանդես է գալիս որպես ստորոգյալ, իսկ ստորոգյալն էլ ձևավորում է հաղորդակցման միավոր՝ նախադասություն, ապա առաջին հերթին հաղորդակցման շղթայում հենց ստորոգյալների կարգերն են միմյանց միջև իմաստային շղթա ստեղծում և նպաստում նախադասությունների կապակցմանը: Նման կապակցություններում բայերից որևէ մեկի ժամանակաձևի փոփոխությունը խաթարում է այդ շղթան:

Ժամանակից բացի՝ դեմքի և թվի կարգերն էլ են կապակցական որոշակի դեր կատարում: Հնարավոր է, որ ենթական զեղչված լինի, բայց հասկանալի դառնա դիմավոր բայի (ստորոգյալի) դեմքից և թվից: Բերված օրինակի երկրորդ նախադասության ենթական՝ *մենք*-ը, զեղչված է. «Բայց սիրում էինք լեռների պատանու անարատ սիրով», սակայն հասկացվում է ստորոգյալից, և կապակցական շղթան չի ընդհատվում, թեև ենթական կրկնված չէ: Այդ դեպքում ուղղակի կրկնություն չկա, բայց զեղչված անդամը ենթադրվում է և մտովի վերականգնվում: Գ. Ջահուկյանը զեղչումը լայն իմաստով ներառում է կրկնության մեջ. «...եթե կրկնությունը և փոխարինումը հասկանանք ավելի լայն իմաստով՝ ներմուծելով նաև քերականական, իմաստային և հնչական կրկնություններն ու փոխարինումները, այլև զեղչումներն ու ակնարկումները (ինքնին՝ գործությամբ կամ իմպլիցիտ կերպով հասկացվելը), ապա կարելի է ասել, որ կրկնությունը, փոխարինումը և հարաբերման հատուկ միջոցները տեքստային կապերի կրողներն են»<sup>13</sup>: Անշուշտ, կրկնությունն ու զեղչումը միայն լայն ըմբռնման դեպքում են միավորվում, իսկ որպես ներտեքստային կապակցման միջոցներ դրանք տարբեր են, քանի որ մի դեպքում բառաձևը կրկնվում է, իսկ մյուս դեպքում՝ ենթադրվում, բայց դա քննության առանձին նյութ է, ուստի այստեղ չենք վերլուծում դրանց փոխհարաբերությունն ու առանձնահատկությունները:

Այժմ անդրադառնանք փոխարինմանը, որը տեքստի նախադասությունների կապակցման մեկ այլ միջոց է: Փոխարինումը, ինչպես նշվել է, կատարվում է չորս ձևով՝ *դերանունով*, *փոխանունով*, *հոմանիշով*, *բնորոշմամբ*: Անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

Փոխարինման դեպքում առկա է *փոխարինվող-փոխարինող-փոխարինություն*: *Ղերանունով* փոխարինումն ամենից տարածվածն է, քանի որ դերանուն խոսքի մասի հիմնական գործառույթը հենց դա է: Նախադասություններից մեկում գործածված բառին մյուս նախադասության մեջ փոխարինում է որևէ դերանուն, և այդ փոխարինությունը սերտ կապ է ստեղծում նախադասությունների միջև: Օրինակ՝ *«Ինձ թվաց, որ այդ հայացքը թափանցեց մինչև Լևոնի*

<sup>12</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 65:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 65:

*հոգու խորքը: Եվ ո՞ւմ հոգու խորքը չէր թափանցիլ այն*<sup>14</sup>: Առաջին նախադասության մեջ գործածված *հայացքը* բառը երկրորդում փոխարինված է *այն* ցուցական դերանունով: Դերանունով փոխարինումը նախադասությունների կապերը սերտացնում է նրանով, որ փոխարինող դերանունը հասկանալի է դառնում փոխարինված բառի հիման վրա, իսկ այդ բառը մեկ այլ նախադասության մեջ է գործածված: Տեքստն ընկալելու համար անհրաժեշտ է լինում հիշել փոխարինված բառը, որը և կապի հիմքն է դառնում:

Դերանունով փոխարինումը չպետք է շփոթել ցուցաբառերի կիրառության հետ: Ցուցաբառերը ոչ թե փոխարինում են որևէ բառի, այլ նշում, որ այդ բառն արդեն հիշատակված է նախորդ նախադասության մեջ, օրինակ՝ *«Առավոտյան արեգակի կիտրոնագույն շողերը սփռվել էին ներս: Լևոնի աչքերն անգիտակցաբար դարձան դեպի այդ շողերը, կարծես ինչ-որ գաղտնի մագնիսի գորոշյալը: Ա՛խ, այդ վեր ուղղված աչքերը, այդ հեզ դեմքը»*<sup>15</sup>: Երկրորդ նախադասության մեջ գործածված *այդ* ցուցաբառը (ցուցական դերանունը) ևս ներտեքստային կապակցման միջոց է, սակայն այն ոչ թե փոխարինել է նախորդ նախադասության մեջ եղած *շողերը, աչքերը* բառաձևերին, այլ դրվել կրկնվող *շողերը*-ի ու *աչքեր*-ի հետ՝ հուշելով, որ նրանց մասին արդեն խոսվել է: Կամ՝ *«Նա դպրոցն ավարտում է 1968 թվականին: Նույն թվականին ընդունվում է բուհ»*: Այս օրինակում գործածվել է *նույն* ցուցաբառը՝ ընդգծելով կրկնվող *թվականին* բառաձևը:

*Փոխանունով* փոխարինման դեպքում գործածվում է փոխանուն բառ, օրինակ՝ *«Սեդանին դրված էին կարմիր, դեղին, կանաչ մատիտներ: Երեխան վերցրեց դեղինը»*: Այս դեպքում ևս նախադասությունների միջև սերտ կապ է ձևավորվում, քանի որ ինչպես դերանունով փոխարինվելու, այնպես էլ այս դեպքում փոխարինողի իմաստը հասկանալի է լինում միայն փոխարինվածի հիման վրա, իսկ այն արտահայտված է մեկ ուրիշ նախադասության մեջ: Սակայն բոլոր փոխանունները չեն, որ այսպիսի կապ են ստեղծում, օրինակ՝ *«Շատ վաղուց մի դեպք էր կատարվել: Երևի միայն տարեցները կհիշեն այդ դեպքը»*: Երկրորդ նախադասության մեջ գործածված *տարեցները* փոխանունը ներտեքստային կապ չի ստեղծում, քանի որ չի գործածվել նախորդ նախադասության մեջ եղած որևէ բառի փոխարեն: Այս դեպքում չի կիրառվել կապակցման *փոխարինում* միջոցը: Այն ընկալվում է որպես գեղչված, բայց նախորդ նախադասության մեջ չգործածված *մարդիկ* բառի փոխանուն:

*Հումանիշով* փոխարինման դեպքում կապն այնքան ամուր չէ, ինչպես նախորդ երկու դեպքում, քանի որ փոխարինողը ինքնին արտահայտում է փոխարինվածի իմաստը և առանց նախորդի իմացության էլ հասկանալի է, օրինակ՝ *«Երբ հասանք լեռան գագաթին, մեր առջև բացվեց մի աննման գեղեցկություն»*:

<sup>14</sup> Ալ. Շիրվանզադե, Պատմվածքներ, Եր., 2009, էջ 7:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 17:



*Բնության սքանչելիությունը մեզ մի քանի բույսեր քարացած պահեց, հետո կամաց-կամաց սկսեցինք ուշքի գալ»:* Առաջին նախադասության մեջ գործածված *գեղեցկություն* բառը երկրորդում փոխարինվել է *սքանչելիություն* հոմանիշով, որով (նաև այլ միջոցներով) նախադասությունների միջև կապ է ստեղծվել, սակայն այդ կապը, ինչպես ասվեց, նույնքան սերտ չէ, որքան դերանունով և փոխանունով փոխարինման դեպքում: Առանց առաջին նախադասության իմացության էլ ընկալվում է երկրորդի իմաստը, մինչդեռ փոխանունի վերաբերյալ բերված օրինակի «Երեխան վերցրեց *դեղինը*» նախադասության իմաստը լիովին պարզ չէ առանց նախորդի, քանի որ հայտնի չէ, թե դեղին գույն ունեցող ինչ առարկայի մասին է խոսքը: Այնուամենայնիվ, հոմանիշով փոխարինման միջոցով էլ ներտեքստային կապ է ձևավորվում, քանի որ հեղինակը պարզապես կրկնությունից խուսափելու նպատակով չի գործածում միևնույն բառը: Պատկերավոր ասած՝ իմաստային որոշակի շղթա կա, բայց փոխված է շղթայի օղակներից մեկը: Կրկնություն<sup>16</sup> և, թե՛ փոխարինում ընտրության համար էական դեր ունի ոճական գործոնը:

*Բնորոշմամբ* փոխարինումը կատարվում է փոխարինվողն այլ բառով կամ բառերով անվանելու միջոցով, օրինակ՝ «Մինյորա Ստեֆանիան համառոտ պատմեց ինձ *Լևոնի մասին հետևյալը*: Նրա *հայրը* եղել է թատերական վարսավիր և չափազանց գեղարվեստասեր: Համեստ, գլուխը քաշ *արհեստավորը* հանկարծ անձնատուր է լինում հարբեցողության կործանիչ ախտին և ոչ առանց պատճառի»<sup>16</sup>: Երկրորդ նախադասության մեջ գործածված *հայրը* բառաձևը հաջորդ նախադասության մեջ փոխարինված է *արհեստավորը* բառաձևով: Շարունակության մեջ հեղինակը գործածում է նաև *վարսավիր* բնորոշումը, ինչպես նաև դերանվանական փոխարինում՝ *նա*: Որպես բնորոշողներ՝ կարող են կիրառվել նաև դարձվածային միավորները, ինչպես՝ «*Խեղճ մարդը* կրակն էր ընկել: Բայց ի՞նչ կարող էր անել այդ *աստծու գառը*, որին ոչ ոք չէր օգնում»:

Բնորոշմամբ փոխարինումը որոշ չափով նման է հոմանիշով կատարվողին, սակայն այս դեպքում փոխարինողը փոխարինվողի հոմանիշը չէ, ինչպես բերված օրինակի *հայր*, *արհեստավոր*, *վարսավիր* բառերը: Պարզապես ներկայացվող նյութի բովանդակային ընդհանրության հիման վրա պարզ է դառնում, որ խոսքը նույն մարդու մասին է, և փոխարինող բառերը իմաստային շղթա են ստեղծում:

Բնորոշման դեպքում էլ կարող են գործածվել ցուցաբառեր, որոնք ավելի են սերտացնում նախադասությունների կապը: Օրինակ՝ «*Պարզվեց, որ տան կահույքը պատրաստել է նրա հայրը*: Այդ հմուտ *վարպետը* ուրիշ շատ գեղեցիկ իրեր էր պատրաստել»:<sup>17</sup> Այդ ցուցաբառը, երկրորդ նախադասության մեջ լրաց-

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 8:

ներով *հայրը* բառաձևին փոխարինող *վարպետը* բառաձևին, սերտացրել է նախադասությունների կապը՝ նաև շեշտելով փոխարինողին:

Ներտեքստային կապեր ստեղծող այս միջոցները գործառական տարբեր ուժերի տեքստերում կիրառական տարբեր հաճախականություն ունեն: Անշուշտ կարևոր է գործառական ոճը, սակայն կարևոր է նաև հեղինակի անհատական ոճը<sup>17</sup>: Օրինակ՝ չափածոյում ավելի հաճախ են հանդիպում բառային կրկնությունները, որոնք թե՛ ոճական միջոց են, թե՛ նախադասությունների կապակցման: Տեքստի (պարբերության) նախադասությունների կապերն ապահովող միջոցները բազմազան են, և բոլորի ամբողջական քննությունն առանձին ուսումնասիրման նյութ է: Այդ հարցերին մասնագետներն անդրադարձնում են տեքստի լեզվաբանությանը վերաբերող տարբեր աշխատություններում, սակայն կրկնությունն ու փոխարինումը դրանց շարքում առանցքային դեր են խաղում: Կապակցման միջոցները քննելիս Գ. Ջահուկյանն այսպես է բնորոշում. «Կարելի է ասել՝ բառակրկնությունը (անվանակրկնությունը) և բառափոխարինումը (ցուցաբառերի համահենքային գործածությունը) պարբերության ներքին և արտաքին կապերի հիմնական միջոցներն են, որոնք հարաբերիչների ծավալուն համակարգի կողքին կազմում են ներհենքային (ներտեքստային) կապերի հիմքը...»<sup>18</sup>:

Մի առանձին քննության նյութ է նաև կրկնվող կամ փոխարինվող միավորների քերականական հարաբերությունների հարցը, այսինքն՝ դրանք ո՞ր դեպքում են դրվում նույն կարգերով (թվի, հոլովի և այլն), արդյո՞ք նրանց միջև որոշ դեպքերում գործում է համաձայնական կապ և այլն: Այդ բոլորը տեքստի լեզվաբանության ուսումնասիրման առանցքային խնդիրներ են, որոնք հանգամանալից վերլուծման կարիք ունեն:

**АРТАШЕС САРГСЯН – Повтор и замена как средства связи предложений.** – Исследование связи предложений в абзаце является одной из важных задач лингвистики текста. Точно так же, как существуют способы соединения слов и компонентов сложного предложения, существуют способы соединения предложений в абзаце. Их довольно много, но важнейшую роль играют повтор и замена. Они имеют свои формы проявления, которые рассматриваются в статье. Повтор бывает словесным и грамматическим. Замена производится местоимением, субстантиватом, синонимом, описанием. Этими средствами между предложениями абзаца создаются связи, которые в одних случаях более сильные, в других — относительно слабые. Если между предложениями не создавать текстовых связей, то будет совокупность предложений, а не текст, хотя каждое предложение будет выражать свой смысл. Стилистический фактор также важен при выборе средств текстовой связи.

**Ключевые слова:** *связка предложений, текст, повтор, замена, местоимение, эллипсис, абзац, союз, синоним, определение*

<sup>17</sup> Տե՛ս Ն. Հակոբյան, Պարբերությունը Դ. Դեմիրճյանի պատմվածքներում, Լեզվի և ոճի հարցեր, հ. 4, Եր., 1977, էջ 175:

<sup>18</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 65:

**ARTASHES SARGSYAN – *Duplication and Replacement as Means of Connecting the Prescriptions.*** - The study of the connection of sentences in a paragraph is one of the important problems of text linguistics. Just as there are ways to connect words and components of complex sentences, there are ways to connect sentences in a paragraph. There are quite a few of them, but repetition and replacement play the most important role. They have their own forms of manifestation, which are examined in the article. Repetition can be verbal and grammatical. The replacement is made with a pronoun, nominalization, synonym, description. By these means, connections are created between the sentences in the paragraph, which in some cases are stronger, in others, relatively weak. If intertextual connections are not created between sentences, then there will be a set of sentences, but not a text, although each sentence will express its meaning. The stylistic factor is also important in the choice of means of intertextual connection.

**Key words:** *sentence linking, text, repetition, substitution, pronoun, ellipsis, paragraph, conjunction, synonym, definition*